## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

19 փետրվարի 2019 թվականի թիվ 11-Ա
ք. Երևան

## «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի փետրվարի 7-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. փետրվարի 19
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 11-Ա որոշման

| **Հեռուստածրագրի անվանումը** | **Թույլտվության ժամկետի ավարտը** |
|---|---|
| «Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ»<br>«Դոմ Կինո Պրեմիում»<br>«Մուզիկա Պերվոգո»<br>«Էյչ Դի Լայֆ»<br>«Մատչ! Պլանետա»<br>«Մատչ! Պրեմիեր»<br>«Կինոպրեմիերա»<br>«Մուժսկոյե Կինո»<br>«Նաշե Նովոյե Կինո»<br>«ԿՀԼ ՏՎ»<br>«Ռուսսկայա Նոչ» | 31.12.2019թ. |